



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ N° 05-Լ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատական օրենսգրքի 35-րդ հոդվածի 7-րդ մասով և 43-րդ հոդվածի 3-րդ մասի 14-րդ կետով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարանների բնականոն գործունեությունն ապահովելու նպատակով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարանների պահուստային ֆոնդից, «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կենտրոնական մարմնին, (5122 վարչական սարքավորումներ) բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածով, հատկացնել 1612.4 հազ. ՀՀ դրամ, որից՝

1) 517.0 հազ. ՀՀ դրամ՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն դատարանի համար համակարգչային տեխնիկա և գրասենյակային գույք ձեռք բերելու նպատակով.

2) 186.0 հազ. ՀՀ դրամ՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վերաքննիչ դատարանի համար համակարգչային տեխնիկա ձեռք բերելու նպատակով.

3) 828.6 հազ. ՀՀ դրամ՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի համար համակարգչային տեխնիկա և գրասենյակային գույք ձեռք բերելու նպատակով.

4) 80.8 հազ. ՀՀ դրամ՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատական դեպարտամենտի համար գրասենյակային գույք ձեռք բերելու նպատակով:

ԼՂՀ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Ն.ՆԱՐԻՄԱՆՅԱՆ

14 մայիսի 2014թ.
ք.Ստեփանակերտ